ՀԱՍՑԷ
M. ARCHAM
Poste Restante
ATHÈNES (*Grèce*)

ՄԻՈՒԹԻՒՆ

ԱՄՍԱԹԵՐԹ

ՕՐԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԳԱՂԱՓԱՐԻ

ԲԱԺՆԵԳԻՆ
Տարեկան ֆրանք 4
Վեցամսեան » 2
Կանխիկ վճարելի

Դ· ՏԱՐԻ ԱԹԷՆՔ 1899 ՍԵՊՏ–ՀՈԿՏ· Թիւ 36

ԿՈՒՍԱԿՑԱՄՈԼՈՒԹԻՒՆ

Ո՛չ թէ կուսակցամոլութեան նշանակութիւնը, այլ պարզապէս կ ո ւ ս ա կ ց ո ւ թ ի ւ ն բառն իմանալու համար եթէ ընթերցողն առաջնորդենք դէպի Լիթռէի բառարանը, ուր երկու բաժանեալ մարմիններու զիրար ջախջախելու միտքը կը յայտնէ. պիտի զարմանայ անշուշտ կուսակցական ո՛ և է անդամ, իսկ երբ այդ կուսակցականը մի քիչ ևս առաջ երթայ մինչև մոլութեան սահմանները ընդգրկում․, մինչև կուսակցամոլութեան լափիւրինթոսը, արդեօք չը՞ պիտի սոսկայ ինքն իրմէն եթէ երբէք մի անգամ, գէթ մի անգամ միայն լուրջ կերպով, անփառասէր տենչով ու ազատ մտքով և լոկ ազգին շահուն տեսակէտով, հեռի ամէն անձնական կրքոտ նկատումներէ խղճահարութեամբ խորհի իւր ցարդ գործածներուն և ապագայի մտադրութիւններու մասին. կը հարցուի, չը՞ պիտի զղջայ ցարդ փոխան մէկ նպատակի որուն իսկ համար մեծ զոհողութիւն կը պահանջէ՛ր, երկու դժուարութեանց մէջ ընկղմիլն, որք ա՛լ անկարելի կընէին իւր մտադրութիւններն. որոնց առաջինն մաքառիլ իւր դարաւոր թշնամիին դէմ, որ կը վերաբերէր ընդհանրութեան, իսկ միւս կողմէ ո՛չ միայն մաքառիլ, այլ և ոչնչացնել ջանալ ուրիշ մէկ ոյժ կամ մարմին որ ճիշդ յօր ու նման իրեն. միայն մի քիչ տարբեր կերպով խորհելու համոզումն ունեցած է, թէև նրա նպատակն ալ, միտքն ալ, սիրտն ալ բոլորովին նման իրենին, թէև իւրաքանչիւրի առանձին աշխատութենէն երկուքն ալ փոխադարձաբար արդիւնաւորիլ սահմանուած են, թէև երկուքն ալ միևնոյն ծառի ճիւղերն են, միևնոյն ազգի զաւակունք, բայց զիրար պառակտելու, ատելու, զրկելու, թշնամանելու և մինչև իսկ քան ըղթուրքը վատ ու վնասակար ճանչնալու տխուր և տնբացատրելի հարկին մէջ գտնուած են կուսակցամոլութեան ախտէն բռնուած ըլլալով։ Ըսէ՛ք, ո՞վ է որ չպիտի սոսկայ այս երևոյթէն հայ լինելով։

Բայց դուցէ առարկուի ինձ թէ կը չափազանցեմ. երբէ՛ք, մինչև իսկ խնդիրը իր իսկական չափով դեռ չեմ ներկայացներ այսքան կարճ տողերով, բայց որպէսզի պ. ընթերցող լաւ համո[illegible]ք մեր ազգի կուսակցամոլութեան անհամար վնասներու գոյութեան, խնդրեմ, աչքէ անցուցէք հրապարակի վրայ պէտքէն աւելի գտնուած թերթերու պարունակութիւնները և այն ժամանակ դուք ևս համոզու... [illegible]եք արդէն։

Տեղ տանք մի քանի փաստե[illegible] լրագրական գաղափարներու տարափի տակ ես ազգ. գործերու նկատմամբ կը տեսնեմ բազմաթիւ առաջնորդող ուղղութիւններ, իբարմէ տարբեր և իրարու հակառակ, հետևաբար զիրար լջատող ու չէզոքացնող առաջարկներ, շատեր անշուշտ ինձ նման կը տեսնեն զանոնք, և իրենց հակումին ու համոզումին համեմատ մէկ կամ միւս կողմին իրաւունք տալով հակառակորդներու թիւը կը ստուարացնեն և կամ չը կարենալով համերաշխ գործունէութիւն մը տեսնել այդ գաղափարական կամ իրական գործիչներու մէջ, իսպառ կը չէզոքանան ազգային գործունէութենէն, ու այս կերպով կը թողուն գործող ոյժերը տկար, որք ո՛չ մի արդիւնք չեն կարող ձեռք բերել. միթէ այս ամէնը կուսակցամոլութեան արդիւնք չե՞ն։

Տակաւին չը թուեցի կուսակցական ներքին ինքնամաքառումները, վիճաբանութիւններ, որք վերջ չունին. կռիւներ, որք սոսկալ արիւնով կը վերջանան մինչ կըրկնուի սպառնումը թողլով, գրական կամ հրապարակային ընդհարումներ, որք օրէ օր փոխանակ մօտենալու կը հեռանան, փոխանակ միաձուլուելու և կեդրոնանալու կը տարբաղադրին կը տարրալուծուին կամ ոչնչանալու կամ ոչնչացնելու յիմար առաջադրութեամբ։

Տեսէք այս ամէնը և ըսէք ինձ՝ թէ ի՞նչ ըրաւ կուսակցամոլութիւնը մինչև հիմա ու ի՞նչ պ՚տի ընէ տակէ վերջ. դժուար չէ գուշակել։ Եւ պէտք է գիտնալ թէ կուսակցութիւններն այսօր երևցածէն խիստ շատ են մեր մէջ, ու ամէն կուսակցութիւն իւր աւերը կը գործէ ազգ. շէնքին մէջ, կը քանդէ ազգ. կառուցումը մաս առ մաս, ու երբ կուսակցութիւն մը կը ստեղծուի, ազգին շինուածքէն քար մ՚է որ ՚ը փրթի, կը գլտորի ու կերթայ ոչնչանալ, իսկ այդ փրթած ու գլորած քարը քանի՜ քարեր կը խախտէ. դա ալ ուրիշ խնդիր։

Ազգ. յեղափոխութեան հրապարակային առաջին գործիչն եղաւ Մ. Փորթուգալեան, մեղմ, հանդարտ, զգոյշ և յարաճուն գործունէութեան քարոզիչ մը, որ միայն գրեց, բայց մեր ազգին տաք գլուխ երիտասարդի մը ունակութեամբ օժտուած լինելու ունակութիւնն իմաստասիրող Նազարբէկ, նկատելով որ գործնական փոքրիկ փայլունութիւններէ աւելի կը շլանայ Հայն, Փորթուգալեանի տեսականը գործնականի վերածելու յանձնապաստան ձեռնարկն ստանձնեց ու յաջողութիւն ալ գտաւ. շատ լաւ։ Յաջողութիւ.ը մարդուկն ամբարտաւանեցուց, անըմբռնելի ծրագիրներով կօշիկէն վեր ելաւ, որով ծնունդ տուաւ մի այլ գործիչ կուսակցութեան՝ Դաշնակցականներու, այդ ալ գէշ չէր, ռուսիոյ մէջ ալ հայեր կային, նոքա ալ իրենց կարգին յարմար միջոցներով պէտք էին օգնել ազգ. փրկութեան գործին, բայց կուսակցութիւններն երեք եղան. անդին Արմենականը Վանայ մէջ արդէն խլրտումը հանած էր, ազգը երկունքի մէջ էր, երեք ուղղութեամբ սկսուած գործ մը յաջողութեան շատ երաշխաւորութիւն ընծայելու բնութիւն չէր կարող ունենալ։ Մուրատ Սասունէն տուաւ առաջին նշանը, հրրդեհն սկսած էր. շատ խոհեմ, հեռանկատ, շրջահայեաց և վարպետ գործունէութեան ու օգնութեան պէտք կար....

բայց ամեն կուսակցութիւն, երբեմն ամեն անձ, իւր հաշուոյն կը գործէր։ Անդին, Պոլսոյ մէջ մի ուրիշ փառատենչ մարդուկ երկարժամանակեայ գրագրական ասպարէզէն յանկարծ պատերազմական ասպարէզ նետուիլ ցանկացաւ, հնչեցուց առաջինն «Մարտ»ի ձայնը, ապա «Նորկեանք»ը պարգևեց աղդին։ Հեռատեսներ արդէն սոյն բաժանեալ մարմիններու գոյութիւնն, որ ընդհանրական ոյժի չէղոքացումն էր, ի նկատի ունենալով և միացումի ուհարկն զգալով՝ հինգերորդ կաղմած էին։ Եւ ո՛չ միայն հինգ, կան այսօր յեղափոխութեան թշնամիներ, մատնիչներ. սիրողներ՝ առանց գործակցութեան, չէղոքներ, անտարբերներ, քննադատներ, ևն ևն, որք տասնէն աելի են և ունին իրենց հետևողները բաւական թուով և ոյժով, ու անոնցմէ շատեր (յարգելով բացառութիւնք) այնչափ թշնամի իրենց դաւանանքը չը յարգողին որ անգիտօրէն կը բացասեն նպատակին, թոյլ տալով ոտնակոխ լինել Ազգ. կենսական շահերուն. ցաւ մը որ սաստիկ կը վտանդէ աղդը և որուն դարմանը կը սիրենք տեսնել կամ դէթ լսել ջերմ աղգասէրներէ։

ՇԱՀԷՆ

ԱԶԳԱՅԻՆ ԽՈՀԵՐ

Հետեւեալն Պուլկարիացի ընիկ մի հայէ զրկուած է մեզ ի հրատարակութիւն. բնագիրը՝ որ թուրքերէն էր գրեթէ նոյնութեամբ հայերէն թարգմանելով կը հրատարկենք իւր մէջ պարունակած ուշադրութեան արժանի կէտերուն համար։

Մեր աղգի ներկայ տարագրութիւնը բնականաբար շատ բան պէտք էր սովրեցնէր մեզ ու սովրեցուց, սակայն այս դառն դասէն ընդհանրապէս չօգտուեցանք մենք։ Այլ հազիւ մի քիչ դաղափար կաղմեցինք մեզ շրջապատող քաղաքականութեան վերաբերեալ, զոր պէտք է ամփոփել այսպէս։

Ինքզինքը քրիստոնէից պաշտպան ցուցնող Ռուս կառավարութիւնը մեր պաշտպանութեան համար ո՛չ միայն բան մը չբրաւ, այլ և ուժ ու թիկունք դարձաւ հայաջինջ սուլթանին, քանի որ հայու ռուսացումն ու Հայաստանի ապագայ գրաւումը ռուսի ձեռքով այդպէս կը պահանջէին ի հաշիւ ռուսին։ Այս պարագային ռուսէն զատ Եւրոպա միայն յանցաւոր էր և քաջալերիչ մեծ Մարդասպանին։

Իսկ մեր աղգութեան այլ և այլ դասակարգերն ունին ամօթոյ մեծ բաժին մը մեր ձախորդութեան մէջ։ Հայ հարուստը ո՛չ մի զգալի և նշանաւոր կերպով ի հանդէս եկաւ սփոփելու նիւթապէս իւր անկեալ ու հալածեալ եղբօր տխուր վիճակը. աղքատները օտարի ուղղմութեամբ ապրեցան ու կապրին և որբերը հայրենի կամ օտար երկրի մէջ այսօր այլադաւաններու որս դարցած՝ կորսուելու սահմանուած են, բայց չերեւիր մի աղգասէր հայ հարուստ, որ գոնէ 50 որբ որդեգրելով մի ազատ երկրի մէջ իւր հաշուոյն որբանոց մը բանայ և անմահացնէ իւր անունը 50 կենդանի արձաններով. որոնց ծախքը օրական մէկ ոսկին դրեթէ չանցնիր։

Հայ կղերը նոյնպէս անտարբեր մնաց իւր նուիրական կոչման մէջ. ո՛չ մի Ղևոնդ երէց չերեւցաւ ցայսօր, ու ո՛չ միայն այսչափ, այլ որ ցաւալին է՝ Եպիսկոպոսներ եղան որք աղգը իւր նարաւոր իրաւունքներով մէկտեղ ի վաճառ հանեցին ու կը հանեն դեռ, սկսեալ պատրիարքէն մինչև հասարակ դպիրը։

Հասարակ ժողովուրդը կամ բուն աղգը չունենալով ինքնապաշտպանութեան նախախնամութիւնը, բաղդի հոսանքին յանձնած ինքզինքը, չը կարողացաւ իւր ոտքը հաստատ կռուանի մը վրայ դնել ու թափառեցաւ քաղաքէ քաղաք, աշխարհէ յաշխարհ ու կը դեգերի դեռ խիստ անստոյգ մի վիճակի մէջ իւր աչերն յառած շահամոլ Եւրոպիոյ, ուրկէ կը յուսայ ձրի պաշտպանութիւն քրիստոնէական հաւատով, առանց գիտնալու թէ քաղաքական աշխարհի մէջ խիղճ ու կրօնք բնաւ գործ չունին։

Ու այս ամենուն հանդէպ եթէ այսօր դեռ կարելի է յուսալ որ և իցէ մի բարեշրջում մեր դժբաղդ կացութեան, դա կարելի կը լինի, եթէ ամեն երկրի ու դասակարգի հայեր իբր դուտ և ճշմարիտ հայ օգնութեան ձեռք կարկառեն իրենց կարողութեան համեմատ նրպաստելով հայ դաղթականին և հայրենի դատին, վերջ տալով անշուշտ անձնական ու կուսակցական սին ու աղգակործան նկատումներու, վասնզի այս կերպով անվիճելի պատասխան մը տրուած կը լինի այն կարգ մը կեղծ հայրենասէրներուն, որք իրենց քսակը չի բանալու համար կուսակցութեանց իրարու դէմ ունեցած ատելութիւնը կամ անմիաբանութիւնը յառաջ կը քշեն միտ երբեմն ալ խարդախ խաչագողերու գոյութիւնը արդեք կը գտնեն իրենց աղգասիրական ձեռնարկներու, և այս պարագային մէջ եթէ կուսակցական հակառակ ուղղութիւնք ու պայքարք իրաւացի արդեք հանդիսանալու բընութիւնն ունենան մեր կեղծ աղգասէրներն արդարացընելու. երկրորդ կէտը, այն է խաչագողներու երեւումը, բնաւ նշանակելի մի պատճառ չէ, վասնզի ընդհանրական մեծ գործի մը մէջ փոքրիկ փսքրոգիներու սողոսկումն ամեն աղգի մէջ ալ տեսնուած է, բայց ասոնց ալ՝ ինչպէս նաեւ բացարձակ դաւաճանաց վարձատրութեան ժամն ալ արդէն սկսած է հնչել ի ձեռն «Մահ Դաւաճանաց» կաղմակերպութեան։

Ուրեմն մեզ՝ ամեն հայերուս կը մնայ անվախ, համարձակ և միաբան ու միախորհուրդ շարունակել մեր արդէն սկսած գործն ի նպաստ հայրենի աղատագրութեան, առանց յուսահատելու նոյն իսկ եթէ շարբաղդը վերստին մի անգամ ալ յաջողի մեր յոյսերն ու ճիգերը պարապը հանել. պէտք է գիտնալ որ, բնական օրինօք ամեն աշխատութիւն իւր վարձքն ունի։ հոգ չէ թէ մի քիչ ուշ, օրինակ մեզ Կրետէն, որու հաստատամիտ որդիք անվհատ կորուստներով շարունակեցին իրենց հայրերէն ժառանգ մնացած սուրբ պարտականութիւնը, և այսօր ստացան ցանկալի աղատութիւնը։

Ուրեմն արթնցէ՛ք հարուստ հայեր և օգնեցէք ձեր անկեալ եղբայրներուն, եթէ չէք ուզեր մի օր ալ դուք անոնց նմանիլ։ Արթնցէ՛ք Քրիստոսի բանաւոր հօտին հովիւները, և իբրեւ հովիւ քաջ ձեր անձը դրէք ձեր ոչխարաց փրկութեան համար, եթէ կուզէք պահել ձեր գերագոյն հեղինակութեան իրաւունքը։ Միայէք և դո՛ւք չուտով անձնուէր գործիչներ եթէ իսկապէս ձեր նպատակն է աղգին ծառայել, իսկ եթէ ունիք մասնաւոր շահու նկատումներ, հեռացէք ասպարէզէն. նոյնպէս և դուք յայտնի և գաղտնի դաւաճաններ, աղգին վստահութիւնը վայելող գործիչներ, որպէսզի աներեւոյթ ձեռքի մը հարուածին զոհ չերթաք վաղ կամ անագան։ Ճշմարտութիւնը միշտ կը հասնի, թէեւ մի քիչ անագան, բայց նորա դատաստանն արդար է և անաչառ. գուցէ շատ ուշ լինի հառաչանաց այն ձայնը, որ դուրս պիտի ժայթքէ ձեր պիղծ բերնէն — աւա՜ղ փառաց անյաւորի կակաղելով. յիշեցէք Թիւթիւնճիեէֆներ. Մամբրէներ....— և որովհետեւ դեռ սրոշ և ընդհանրական մի ծրագիր չկայ գործելու, ապագայ ամեն պատահականութեան դէմ պատրաստ գտնուելու համար, ձեռներէց անձինք ամեն երկրի մէջ թող աղգ. ոնտուկներ հաստատեն ու այլևայլ

ճղանակներով եկամուտներ կամ բաժնեգներ ու տուրքեր սահմանեն և շահագործեն զայն մինչեւ պատեհ ժամը, յորում առ ի չգոյէ դրամի գուցէ շատ պատեհ ու նպաստաւոր մի գործունէութեան միջոց ու ժամանակ կորսնցնենք, ինչպէս շատ անգամներ այդպիսի ժամանակներու մէջ գործիչներու առ հարուստներն ըրած դիմումներն անօգուտ անցան. սա շատ պարզ՝ բայց բնական ու անվրիպելի կերպով հրէական օրինակը կարծեմ մեզ նախատինք չի բերեր։

ԲԷՕՍՏԷՆՃԷԻ ԲՈՂՈՔԱԿԱՆԱՑ ՎԱՐԺԱՐԱՆԸ
(Գերմանօ-Հայկական Վարժարան)

«Ով որ Հռովմ չէ տեսեր, դժոխքի վրայ գաղափար չունի» կըսէ Իտալական առածը, այդպէս ալ՝ ով որ բողոքական գործիչների, քարոզիչների հետ գործ չէ ունեցել, նա չը գիտէ ի՛նչ են սուտ, կեղծիք, անհաւատութիւն, կուսակցական սոսկալի պայքար, մոլեռանդութիւն, գողութիւն և բարոյական մարդասպանութիւն։

Այժմ կարգաւ և փաստերով հաստատեմ իմ յայտարարութիւնը. բայց նախ քան զայս, «Իրաւունք» լրագրի մէջ երկ՛ցս սոյն վարժարանի մասին եղած հրատարակութեան մի կարեւոր կէտ՝ ներկայեմ ընթերցողաց։

«Իրաւունք»ի Թղթակիցը գրած էր թէ «Բէօստէնճէի բողոքական վարժարանի մէջ Հայ տղոց Հայերէն խօսիլն արգիլուած է եւայլն» ընթերցողը մի պահ սոյն ճշմարտութեան չհաւատալու արդար իրաւունք մ'ունենալ կարծեց, սա տրամաբանութեամբ թէ վարժարանին մէջ Հայ լեզուի աւանդումը չտրամադրեր այդպիսի մի արգելքի գոյութեան։ Իրա՛ւ, պարզ հասկացողութեամբ մը այդպիսի եզրակացութեան յանգիլ կարելի է, իսկ ճշմարտապէս և իրապէս սխալ է այդ հասկացողութիւն, զոր կը հաստատեմ իբր կատարեալ իրազեկ նոյն վարժարանի ամեն ընթացին։

Այս վարժարանը, որ կը կառավարուի գերմանական բողոքականութեան պրօպականդայի այն կուսակցութենէն, որուն ընդհ. տեսուչն է Տօք. Պէսիկէր, յանձնուած է Ռուսիայի փախստական պ. Թարայեանցի հոգաբարձութեան, որը իւր կեղծ քրիստոնէական մոլեռանդութեան հետ ունի և վերջին աստիճան հայատեցութիւն. թէեւ ինքն ալ դժբաղդաբար հայ մըն է։ Վարժարանին մէջ կաւանդուին 5էն 15 տարեկան երկսեռ ուսանողաց երեք լեզուներ, գերմ., հայ. և ռումաներէն։ «Վարժարանին մէջ հայերէն խօսիլն արգիլուած է» այո՛, ճիշդ է. շաբթուան վեց օրերուն մէջ չորս օր գերմաներէն և երկու օր ռումաներէն կը խօսին ուսանողք, ու կը պատժուին անխտիր ամեն հայ ուսանողք, որ դիպուածով, մոռացմամբ կամ գաղափարնին յայտնելու լեզուական պաշարի պակասութեամբ հայերէն կամ Թուրքերէն նախադասութիւն մը կը գործածեն։ Ճիշդ է թէ հայերէն մի՛ խօսիք ըսուած չէ տղոց, բայց գերմ. և ռումաներէն չը խօսողը պատժել ի՞նչ կենթադրէ. պատասխանը պարզ է, բայց խիստ թափանցիկ և ուրացումը ծիծաղելի։

Սոյն վարժարանին մէջ կուսանին գերմանացի, ռումէն, ռուս և հայ մանկունք։ Հայոց թիւն է 40, մանչ և աղջիկ, որք բարոյապէս ռուս և գերման ընկերակիցներուն ճնշման տակ ստրկական նկարագիր մ'ունենալու սահմանուած են ապագային, վասնզի գերմանք. մանչ թէ աղջիկ դասարանի մէջ կամ դուրսը գերմաներէն չը խօսող հայ մանուկներու վրայ լրտեսական իշխանութիւն ի գործ դնելով զանոնք պատժել կուտան. իսկ հայոց համար բողոք կամ արդարացում անկարելի է, գերմանը ուտ չիխօսիր. այս մասին հայ ուսանողներու մանկական աղիողորմ արտասուքները շատ տեսած եմ և դատախազները յանդիմանած, վասնզի շատ անգամ այս վերջինք գրպարտիչներ ալ եղած են իրենց տղայական միտումներով, որք կրնային իբր տղայական արարք անվնաս թուել, եթէ հետեւանքը մեր զաւակաց օրըստօրէական ստրուկ ու ցած նկարագիրը ստեղծելու բնութիւնը չունենային, ինչ որ շատ լաւ գիտեն մեր պատուելիները և այդ իսկ մտօք յառաջ կը վարեն քրիստոնէական (բողոքականական) մեքենային ընթացքը, զոր ես ալ ի լոյս կը հանեմ ի զգուշութիւն մեր միամիտ հայերուն, որ խաբուելով գերմանական լեզուի և երգերու խաբեպատիր երեւոյթէն զաւակնին կոտարացնեն այսօր բարոյապէս, վաղը կրօնապէս, իսկ վերջի վերջոյ թէ ազգայի՛ն և թէ ընտանեկա՛ն տեսակէտով։

Իսկ թէ ինչո՞ւ ընդունուած է հայ լեզուի ուսուցումն այդ վարժարանի մէջ. կարճ խօսքով այդ ոստը (էօքսէ) մ'է թռչուն որսալու. նոքա գիտեն որ Հայը որչափ ալ օտարասէր լինի, միշտ կը սիրէ իւր լեզուն իւր ուրիշ հնութեանց հետ, գիտեն որ առանց այդ միջոցին ո՛չ մի հայ իր զաւակը չը ղրկեր օտարի վարժարանը (բացառութիւնք կը յարգուին), ուրեմն դա առաջին և գլխաւոր միջոցն է որսացումին, և թէ ուրի՞շ ո՞ր ազգը կարելի է բողոքական դարձնել բացի հայէն, Ռումէ՞նը, Յո՞յնը, Թո՞ւրքը, Քի՞ւրտը. անշուշտ ո՛չ մէկըն ալ. և ուր որ երթան այդ մարդորսները, գործերնին հայու հետ է։ Ուրեմն հարկ էր որ հայ լեզուն եւս ընդունէին, առանց ջանալու ոյժ տալ նորա յառաջացման։ Ամբողջ մի տարուայ ընթացքին վարժարանի ո՛չ տեսուչը և ոչ մէկ հոգաբարձուն բարեհաճեցան մի անգամ դասարանէն ներս մտնել, տեսնելու թէ ի՞նչ կընէ հայ ուսուցիչը, կամ գէթ հարցնել որ և իցէ բան տղոց յառաջդիմութեան մասին։ և ո՛չ միայն այսչափ, որ այպանելի անհոգութիւն է և նպատակի մերկացում, այլ և խոչնդոտ ալ կը լինէին հայ լեզուի զարգացման դէմ։ Մեծ տղայոց դասակա՛նը շաբաթն երեք անգամ հայ դասատուն կը մտնէ, առաջին ժամուն և միշտ որոշեալ ժամէն մէկ քառորդ ժամ կանուխ կը սկսէ դասաւանդման, չուզելով այդ քառորդը ի զուր անցնել. գերման տեսուչը նկատեց զայս և զայն արգիլելու անուղղակի միջոցը գտաւ։ Այդ ժամանակամիջոցին նոյն դասարանի ուսանողները խմբովին իւր դասարանը կը տանէր այլեւայլ պատճառներով, երբեմն նախապէս անգիր ընել տուած աղօթքը քննելու, երբեմն պատժոյ մը մնացեալ մասը գործադրելու կամ երգ մը դաս տալու։ Վարժարանի մը մէջ առաջին դասէն առաջ դաս նայել դեռ լսուած չէ. երկու առաջին անծանօթ գոյութիւն է, բայց այնտեղ կայ եղեր, և այդ ժամուն աղջիկներն ալ իրենց վարժարանէն խումբ խումբ մանչերուն կողմը կուգան «պատուելիին բան հարցնելու», սա բոլորովին տարօրինակ և անծանօթ մանկավարժական գաղտնիք է....., և այս երկսեռ միասնականութիւնը տեղի կունենայ ամեն շաբաթ օր վերջին ժամուն, փոքրերը արձակուած, աղջիկները կուգան մանչերու կողմը. գերման պատուելին ջութակ (քէման) ի ձեռին չը գիտեմ ի՞նչահանդէս մըն է որ կը կատարէ. ինք ջութակ կ'ածէ և երկսեռ ուսանողք՝ որոնց մէջ մինչեւ 16 տարեկաններ կան, կերգեն ամբողջ մի ժամ, երբեմն ա՛լ աւելի. կերեւի Տիրոջ այգին կը մշակեն մանկավարժօրէն և պատուելին ա-Դաւիթ մարգարէի դերը կը կատարէ։

Ա. ՊՏԱԿ

ՍԱՐԳԻՍ ՔԱՀԱՆԱՅ ՂԱՐԻՊԵԱՆ

Գոհունակութեան արժանի է տեսնել որ Պուլկարահայերս ալ մէկ տարուան մէջ ունեցանք երկու արժանավայել քահանաներ. Սարգիս քհնյ. Ղարիպեան և Տաճատ քհնյ. Տէրձակեան. առաջինն ի Վառնայ իսկ երկրորդն ի Սիլիստրէ։ Երկուքն ալ երկար տարիներ ուսուցչութեան պաշտօն վարած՝ լուսամիտ և զարգացեալ նորընծայ երիտասարդ կղերականներ են, որոնք բացառիկ անշահախնդրութեամբ ու կրօնական ու բարոյական գիտութեանց հմտութեամբ իրե՛ց կոչման արժանի հանդիսացած կը վայելեն Պուլկարհայ գաղթականութեան համակրութիւնը։

Արժ. Սարգիս քհնյ.ի հոգելոյս հայրը բնիկ Պոլսեցի է, 1865ին Վառնայ փոխադրուելով ամուսնացած, իսկ 1870ին ի Կ. Պոլիս արժանայիշատակ Ներսէս Վարժապետեանի ձեռամբ քահանայ ձեռնադրուած է Սան-Սթեֆանոյի Եկեղեցւոյն։ Երբ երկրորդ անգամ կայցելէ Վառնայ, տեղւոյն ազգայնոց խնդրանօք մշտնջենապէս կը հաստատուի հոն և ամբողջ 21 տարիներ այնքան անձնուիրութեամբ կը հովուէ տեղւոյն ժողովուրդը, որ իւր մահուանէ վերջ լումայ մը իսկ չէ թողուցած իր զաւակաց։

Սոյն արժանայարգ կղերականի որդին Տիար Գէորգ Ղարիպեան (այժմ Սարգիս քհնյ. Ղարիպեան) 12-13 տարիներ շարունակ ուսուցչութեան պաշտօն վարելէ յետոյ Վառնայի հայ գաղթականութեան միաձայնութեան ձայնով քահանայ ձեռնադրուած է Մեսրոպ Արքեպիսկ. Սուքիասեանի ձեռամբ։

* * *

Արժ. Հայրը վերջերս երբ այցելեց քաղաքս, Աւագ քահանայ Տէր Կարապետ Պօյաճեանի հրաւիրանօք օգոս. 8ին Ս. Պատարագ մատոյց Եկեղեցւոյս մէջ։ Ս. պատարագի արարողութեան պահուն ժողովրդեան մէջ աղմկայոյզ խլրտում մը ծագեցաւ «յիշո՛ւ չյիշուի» խնդրոյ առթիւ։ Պատարագիչ քահանային՝ հակառակ ինքնիրեն թաղականներու և աւագ քահանայի հրամանին, ժողովրդի կամքին համակերպելով չյիշեց Օրմանեանի անունը։ Ժողովրդի ուրախութիւնը, իսկ հաստատ ջոջերու ղայրոյթը նկարագրել անկարելի է. այս վերջիններու մէջ Տիար Փափազեան՝ որ քիչ չատ ուսեալ անձնաւորութիւն մէ, յանիրաւի լուտանքներ տեղացուց Արժ. Ղարիպեան հօր գլխին, իսկ աւագ քահանայն հակառակ իւր պաշտօնի կոչման նոյն օրը Եկեղեցի չեկաւ. Թէպէտև պատարագիչ քահանայն արիւնհեղութեան առաջքն առնելու համար նախապէս զայն յորդորել փորձելով խստիւ յանդիմանուած էր։

Մենք կը փափաքէինք գիտնալ թէ՝ քահանայք ժողովրդեա՞ն կը պատկանին, թէ մի քանի ինքնահաւան և օրինաց բոլորովին անտեղեակ ջոջերու՝ կը թողունք որ պատասխանէ մեզ հաստատգլուխ Տէր Կարապետ Պօյաճեանը։

ԳԱՂԹԱԿԱՆ

Ռուսճուգ 2 Սեպտ. 99

ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ԵՒ ՊԱՊԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՄԷՋ ԽՏՐՈՒԹԻՒՆ

Յունաստանի Շիրա քաղաքի օսմանեան հիւպատոսը կաթոլիկ հայ մըն է. վերջերս խեղճ Մշեցի մը անոր դիմելով անցագիր մը կը խնդրէ հայրենիք վերադառնալու համար։ Թրքամոլ հիւպատոսը փոխանակ քաղաքավարութեամբ պատասխանելու, անպատկառօրէն կը սկսի հայութեան հայհոյել սա՛ դռեհիկ բառերով՝ «էրմէնի տինինի մէզհէպինի ....., տահա պուլունո՞ւյօրմուսունուզ տիւնեադա, նէ՞ վագըթ քէօքտէն ղըրըլըճ պիթէճէքսինիզ»։ Գաւառացի հայն իր ղայրոյթը չկրնալ զսպելով, կը թքնէ հիւպատոսի երեսին և անոր ու սուլթանին հայհոյանքներ տեղացնելով դռնէն դուրս կելլէ։ Ճանապարհին կը հանդիպի հայ երիտասարդի մը, որուն մանրամասնօրէն կը բացատրէ պատահած դէպքի չարժառիթը։ Տաք՝ գլուխ երիտասարդը սաստիկ յուզուած հիւպատոսարան երթալով աղմուկ հանել կը փորձէ, բարեբաղդաբար մի քանի հայեր դժուարութեամբ զայն կը համոզեն ու չարիքի առաջքն առնել կը յաջողին։

Մի քանի օր վերջ հիւպատոսն իւր սովորական պըտոյտէն պաշտօնատեղին վերադարձած պահուն նոյն երիտասարդը յանկարծ անոր առջեւ կը ցցուի և միեւնոյն ժամանակ մի քանի ապտակներով գետին կը տապալէ զայն. ոստիկանութիւնը վրայ հասնելով կը ձերբակալէ տղան, որուն արդարութիւնը վայրկենական հարցաքննութենէ մը հաստատուելով ազատ կը թողուի։

* * *

Պահ մը ենթադրենք թէ՝ հիւպատոսի վատութիւնը իր կաթօլիկութեան վերագրելով անիրաւութիւն մը ըրած կը լինինք, ինչու որ մեր մէջ ալ ոչ սակաւ ազգատեաց դաւաճաններ կան, որոնք իրենց անձնական գձուձ շահերը ազգութեան պատուէն ու հանրութեան շահերէն նախադաս համարելով շան պէս կը գուրգուրան իրենց հաց տուող տիրոջ վրայ, և միշտ ի վնաս իրենց ազգին կը գործեն ու կը խօսին։ Բայց ցաւալի է որ երկու ազգակիցներու միջեւ խտրութիւն դնելու մոլութեամբ պաշարուած է նաև կաթօլիկ հայ երիտասարդութիւնը, որուն մի անհաճոյ նմոյշը այս օրերս մեր քթին առջեւ տեսանք։

Լեզուագէտ երիտասարդ մը Եւրոպայէն Աթէնք ը հասնի, իր ունեցած դրամը ճամբորդութեան մէջ սպառելով, կը հիւրասիրուի իրեն անծանօթ հայու մը կողմէ։ Այս վերջինը երկու կաթօլիկ բարեկամներ ունենայ, որոնք մերթ ընդ մերթ անոր խանութը կայցելեն. հոն կը տեսնեն նորեկը, բայց յարաբերութիւն չեն ունենար։ Օր մը միւսիւ Ժօզէֆը այդ խանութին մէջ առանձին կը գտնէ հիւրը, որուն հետ երկար խօսակցելէ յետոյ կը հարցնէ թէ՝ կաթօլի՞կ է թէ հայ. ինչպէս կըլլայ այն ալ կատակօրէն կաթօլիկ եմ կը պատասխանէ։ Այս ատեն միւսիւ Ժօզէֆը աւելի մտերմութեամբ վերաբերուելով ձեռքերը կը սեղմէ և հա՛ պիզտէն իմիշսին ըսելով տուն կը հրաւիրէ։ Հետեւեալ օրը կերթայ իր միւս ընկերոջ կաւետէ, ծօ՛ միւսիւ Ծուզէ, պիզտէն պիրիսի կելմիշ։ — Քի՞մ տիր։ — Քիմ օլտուղունու պիլմէմ ամմա կաթօլիկ տիր։ — Կէթիր կէօրէլիմ քի՛մ իմիշ։ Միւսիւ Ժօզէֆը կերթայ հիւրը առնելով սրճարանը միւսիւ Ծիւզէին կը ներկայացնէ. վերջինը ոտքի ելնելով — ծօ՛ հա՛ սէ՞ն միսին, պէն սէնի ....ին թիւքեանընտա պիր գաչ տէֆայ կէօրտիւմ, ամմա սէնի էրմէնի զանն իտէրէք կէօրիւշմէք իսթէմէտիմ. ալֆ իտէրսին, պիզտէն իմիշսին։

Կաթօլիկ հայ երիտասարդութիւնը թող լաւ ճանաչէ, որ մեր թշնամին լուսաւորչականի, կաթօլիկի և բողոքականի միջև երբէք խտրութիւն չը դներ. ամէնքն ալ հայ կը ճանաչէ և ամէնքն ալ հաւասարապէս կատէ։ Ինչո՞ւ ուրեմն չեն մտածեր թէ՝ երբ ազգը գերութենէ ազատի, իրենք ալ մեզի հետ Հայկական ազատ Դրօշի տակ իբր եղբայր միեւնոյն իրաւունքն ու ազատութիւնը պիտի վայելեն, ինչ որ ուրիշ ազատագրուած ազգերու մէջ նոյնը եղած է։ Մաղթենք որ ի շնորհս Մխիթարեան Միաբանութեան բազմարդիւն հրատարակութեանց՝ անոնց միտքն ալ լուսաւորուի ու օր մը վերջապէս զգան իրենց աններելի թերութիւնները։

ԱՆՄԱՀ ԺԻՐԱՅՐԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Բ

Նորեկ հիւրը (Ժիրայր) իւր սրտի խորերէն հառաչանք մը արձակելով առաջարկեց իւր ընկերին սակաւ ինչ շունչ առնել: Ընկերը հաւանութիւն տալով մատնանիշ ընելով ի հեռուստ տեսնուող լերան մը ստորոտը ուր հիանալի ջուր մը կը բղխէր. գրեթէ քառորդ ժամու չափ հեռաւորութիւն ունէր: Մինչեւ որոշեալ տեղը հասնիլը միջոցին խոր լռութիւն մը կը տիրէր իրենց մէջ, այդ պահուն մեծանուն հայրենասէրը խոր մտատանջութեան մէջ թաւալած կը խորհէր թէ ինչ կերպով բացատրէ անոր իր ճամբորդութեան պատճառներն ու գաղտնի նպատակը: Թէպէտեւ իրեն ընկերակցող երիտասարդը ազնիւ ու եռանդոտ կը տեսնուէր, սակայն ինք իբր փորձառու յեղափոխական մը՝ միշտ կը վարանէր գաղտնիք տալ անոր: Վերջապէս հասան լերան ստորոտը ջուրին առջեւ փոքրիկ ժայռի մը վրայ նստան, հիւրընկալ երիտասարդը նոյն տարուան բոյսերու առատութեան վրայ խօսելով սկսաւ գովաբանութիւն ընել նորեկին թէ ինչո՞ւ այնքան շատ կը մտածէ ու չի խօսիր երբեք. նա՝ ոտքերը տարածած ու թիկունքը ժայռին յենած երկրորդ հառաչ մը արձակեց ու միեւնոյն ժամանակ իր չուրջը դիտելով դարձաւ անոր մեղմաղձիկ ձայնով մը ըսաւ: «Ինչ աննման վայրեր են ասոնք, մարդ կրնայ երկար ժամանակ ապաստանիլ այս անառիկ լեռներու մէջ, սակայն ափսո՜ս որ փոխանակ իր հարազատ զաւակաց ազատ ապաստարաններ ըլլալու աւազակ թուրքին ու քիւրտին որջեր եղած են, մինչդեռ անդին հայը՝ իր ամբողջ կեանքը աճուրդի դրած դառն աշխատանքով այդ յուռթի դաշտերը կը մշակէ ու կարգինագործէ, առանց նկատի առնելու սաիրական կէտը թէ՝ իր չարքաշ աշխատանաց քրտնաթոր արդիւնքը կը ծառայեցնէ միայն եւ միայն այդ սոսկալի գայլերը կշտացնելու, որոնք երբ մի քիչ քաղցերնին կանցունեն՝ այս անգամ կսկսին իր պատւոյն ու աւանդութեանց հետ խաղալ: Իսկ կառավարչական կազմակերպութիւնն ըսես, այդ լեռնային աւազակաց վարչական ճիւղերը կը ներկայացնէ քաղաքաց մէջ, իբր հայ գիւղացիի կատարեալ պատուհաս: Ո՞վ է հայը. իր գիւղին, անոր առջեւ նշանակութիւն չունի, որուն ինչքը ու ստացուածքը իր բացարձակ սեփականութիւնն է: Հայ գիւղացին պատրաստ է աշխատիլ, միշտ աշխատիլ եւ սնուցանել իր դահիճները. այդ մեքենական աշխատութեան փոխան գէթ իր կեանքն ու պատիւը ապահովուած լինէր, ա՜յն ալ չը կայ. ինչպէս իր աշխատութիւնը՝ նոյնպէս եւ իր կեանքը, պատիւը, կրօնական աւանդութիւնները մոլեռանդ թշնամւոյն քմահաճոյից ենթարկուած են:

Ո՛չ, ո՛չ: անկարելի է այլ եւս այս ռէժիմի տակ ապրիլ. 44 դարեան ազգ մը՝ որ քանիցս իր ազատութիւնը ձեռք բերելով ունեցած է իր պատմական փառաւոր անցեալը եւ իր ժամանակին մէջ թէ՛ հանճարով եւ թէ տաղանդով ամենէն հռչակաւորը հանդիսացած է, իսկ այսօր աւա՜ղ, իրեն տիրապետող բարբարոս ցեղերը 7-8 դարերէ ի վեր, այս սիրուն աշխարհին ու ժիր ժողովուրդին սրտին չոքած՝ անոր արիւնը կը ծծեն եւ անոր ֆիզիքական ու բարոյական կարողութիւնը տկարացնելու կը նկրտին. այո՛, եթէ քիչ մը եւս անտարբեր մնանք իսպառ պիտի կորսուինք: Այս ազգը հակառակ իր հեզ ու հլու բնաւորութեան, ունի զարմանալի անձնազոհութիւն ու առիւծի արիութիւն, բայց դարաւոր ստրկութիւնը թմրեցուցած է զայն. չի յուսահատինք անոր մեռելական անշարժութենէն. թէեւ մոխիրի զանգուածներ կը ներկայացնէ մեր սարաբաղդ Հայրենիքը, երբ մի քիչ քրքրենք այդ մոխրակոյտերը, անոնց տակ պահուած անշէջ կայծեր պիտի գտնենք. պէտք է զանոնք դուրս քաշել ու հրահրել, ահա՛ այն ատեն միայն կրնանք յուսալ մեր պաշտելի Հայրենեաց ցանկալի ազատութիւնը: Հայ գիւղացիին պէտք է սորվեցնել որ օրօրին մաճէն հրացանն անբաժան պահէ, ապա թէ ոչ եզները՝ արօրը՝ արտը՝ հունձքը չեն կրնար ապահովուած ըլլալ. բայց ո՞ւրկէ սկսելու է արշաւանքը: Տղրուկները թէ՛ ներսէն եւ թէ դուրսէն միօրինակ արիւնաքամ կընեն զինքը, թուրքին ու քիւրտին միացած է նաեւ հայ վաշխառուն եւ կղերը, որով ժողովուրդի ստրկութիւնը իրենց ագահ ընչաքաղցութեան գործիք դարձուցած մէկը կառավարութեան, օրէնքի անունով կը սպաննայ, իսկ միւսը Աստուծոյ եւ դժոխքի, որով հեգ ժողովուրդը թէ՛ աշխարհի եւ թէ հանդերձեալի անունով սոսկումի մէջ կը պահեն: Արդ, հարկ է նախ ժողովուրդին միտքը լուսաւորել ուսումն տալ որով միայն կրնանք անոր մտքի խաւարը փարատել, պլմատափել ընել անոր սրտին մէջ արմատացած նախապաշարեալ գաղափարը եւ ճանչցնել մարդկային իրաւունքները:

Հարկ է նաեւ մերկացնել այն զեղծումներն ու կեղեքումները, զորս ի գործ կը դնեն թէ ազգայինները եւ թէ օտար ձրիակերները. այս անիրաւներու դէմ մեր իրաւունքները պաշտպանելու եղանակը ու միջոցները պիտի սորվեցնէ մեզ ուսումն ու գիտութիւնը, հետեւապէս վարժարաններու օժ տալ մեր գործունէութեան առաջին քայլը պիտի լինի: Ինչպէս ըսի մեր թշնամին միայն օտարը չէ, այլ հայ անուն կրող դաւաճաններն են, որոնց հարուածները աւելի ծանր են. զինենք չողոքորթողները, իրենց առջեւ քծնողները կը պաշտպանուին, կը քաջալերուին եւ կրնան մուտ գտնել ազգային բարենպատակ գործերու մէջ, մի միայն անկեղծներու եւ անշահախնդիր հայրենասէրներու ազատասիրական ձգտումները չէզոքացնելու համար, յանձն առնելով ամեն կարգի ստորնութիւն, մատնութիւն եւ դաւաճանութիւն. բայց մենք երբեք պէտք չէ յուսահատինք, քանի որ հայ ժողովուրդը տառապանաց մէջ է. անոր սիրուն համար պէտք է յանձն առնենք ամեն տեսակ զրկանք ու հալածանք, մինչեւ որ յաջողինք օր մը ազատութեան սէգ դրօշը ծածանել բարձրաբերձ Հայաստանի լերանց գագաթներու վրայ»:

Գիւղացի երիտասարդը լռիկ մնջիկ ուշ կը դնէր անծանօթին այդ խորհրդածութեանց, եւ կը գուշակէր թէ իր խօսակիցը սովորական մարդ մը չէր, այլ հրեշտակ մը՝ որ իր սրտի ամենաթաքուն խաւերը կը պրպտէր եւ կը յորդորէր զինքը հրաւիրել դէպի ինքնաճանաչութիւն. իրեն համար այլ եւս անծանօթ մը չէր նա. իր սրտին հոգւոյն ամենէն մօտ բարեկամն էր. սիրայօժար կը թողուր իր տունն ու տեղը եւ կը հետեւէր անոր եթէ այդ վայրկենին իսկ սկսէր նա իւր ծրագրի գործադրութեանը..., սակայն ո՛չ. անծանօթը այդպէս անխորհուրդ չէր ուզեր գործել, նախ կուզէր ծանօթանալ, լուսաւորել այդ ժողովուրդը եւ ապա գործի ձեռնարկել:

Ժամերն ու վայրկեանները անզգալի կերպով սահած էին եւ արեգակը մօտ էր աներեւութանալու. երկու երիտասարդները ոտքի ելան, վերջին ակնարկ մը եւս նետեցին իրենց չուրջն ու սկսան կամաց կամաց ետ դառնալ դէպի գիւղ:

Գիւղացի երիտասարդը իւր ընկերներուն պատմած էր իրենց լեռներու մէջ ըրած պտոյտի եւ օտարականի յայտնած գաղափարի նկատմամբ, այլ եւս իրենց տունն խորհրդակցութեանց ժամադրավայր մը եղած էր:

Մեր պատմութեան լոյս տալու համար պարտաւոր ենք

ճամբորդի նկատմամբ մեր ունեցած ծանօթութիւնը տալ ընթերցողաց. — հակառակ երիտասարդներու թախանձանքին, նա՝ լռութիւն պահած էր իր ծննդավայրի, անունի և մականունի մասին. Ռուսաստանէն կուգար, ե... քաղաքի ազգ. վարժարանին մէջ դասատուութեան պաշտօն վարած էր և հիմա ալ կառավարութիւնը զինքը կը փնտռէր. իր անցած տեղեր ժիրայրի անունով ճանչցուած՝ էր, հետևաբար Զ, զիւղի մէջ եւս նոյն անուամբ ճանչցուեցաւ, դարձեալ կուզէր դասատուութեան պաշտօն ստանձնել, թոչակ եայլն չէր պահանջեր, միայն ուտեստ ու հագուստով կը բաւականանար։

(Շարունակելի) ԱԼԻՍԻ ՈՐԴԵԳԻՐԸ

ԼՐՏԵԱ—ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆԸ

ՀԱՅԿԱԿԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆԸ ԻՆՐ ՏԵՍԱՐԱՆՈՎ

Դիտեց և Գրեց
ՃՇՄԱՐՏԱԽՕՍԵԱՆ

Ժ

Տամատեան — Շատ ուրախ եմ, որ Միութեան իշնդերի մէջ աղնիւ կերպով վարուեցաք, ի զուր տեղը ամբողջ ազգը ձեր անձը պատճառ պիտի նկատէր, ձեր հրաժարելովը ազգին անկեղծ համակրութեան արժանի պիտի ըլլաք։ Երթամ գրեմ մեր Փարիզի և Աղեքսանդրիայի ընկերներուն. ցտեսութի՛ւն։ (կը մեկնի)

Արփիար— (առանձին) Այս անպիտա՜ն Տամատը ու՞րկէ կեղրոնի անդամ ընտրեցին..., եթէ այս սատանան դէմս չելլար, ուզածիս պէս կը խաղայի։ (ձեռքը ճակտին տանելով մտածելէ յետոյ) Բայց ո՛չ, չը՛ պիտի յաջողին, մինակ Տամատով ու Ճանկիւլեանով գործ չը լմննա՛ր...։ Երթամ մեր Փարիզի և Աղեքսանդրիոյ ընկերներուն զրեմ, որ Միութեան արդելքներ յարուցանեն։ (կը մեկնի)

(Ճանկիւլեան ներս կը մտնէ, քիչ յետոյ Արփիար։)

Արփիար — Ժընէվ նամակ գրեցի՞ք։

Ճանկիւլեան — Այո՛, այս առաւօտ։

Արփիար — (բարկանալով և պօռալով) Ինչո՞ւ շուտով գրեցիր, ես չը՛ պիտի հրաժարիմ, խօսքս ետ կառնեմ, պէտք է Ժընէվ նամակ մը եւս գրե՛ս և իմացնես որ ես չը պիտի հրաժարիմ։

Ճանկիւլեան — Այդ բանը չեմ կարող, ես ստախօս չեմ գրածիս հակառակը ի՞նչպէս կարող եմ գրել։

Արփիար — Թո՛ղ Տամատեանը գրէ, ես չեմ հրաժարիր բոլոր պատգամաւորները թո՛ղ իրենց ստորագրութեան տակ պահանջեն այդ բանը, ձեր խօսքով ես չե՛մ հրաժարիր։

(Տամատեան ներս կը մտնէ)

Ճանկիւլեան — (Տամատեանին) Արփիար միտքը փոխեր է, չեմ հրաժարիր կըսէ կոր։

Տամատեան — (Արփիարին) Ճի՞շդ է։

Արփիար — Այո՛, ճի՛շդ է։

Տամատեան — Բայց վարչութեան անդամներու, մասնաճիւղերուն զրեցինք ձեր հրաժարիլը...., խայտառակութի՛ւն է։

Արփիար — (բարկանալով և պօռալով) Ո՛չ վարչութեան անդամները կը ճանչնամ, ո՛չ պատգամաւորները, ո՛չ մասնաճիւղերը ևոչ ալ ժողովուրդը...։ Ես յեղափոխական չէի չեմ և ասկէ վերջն ալ չը պիտի ըլլա՛մ...։ Հայ ազգին համար յեղափոխութիւնը մեռա՛ծ է....։

Ճանկիւլեան — (ընդմիջելով) Բո՜ւ շնորհիւդ...։

Արփիար — (կը շարունակէ) Ինչո՞ւ դիս բերին այս գործին մէջ մտցուցին..., այո՛, ստիպո[illegible]ին մտցունել, որովհետեւ չէին կարող չը մտցունե՛լ..., ուրեմն, քանի որ դիս մտցուցին զօրով հրաժարեցնելու իրաւունք չունին...։

Ճանկիւլեան — (բարկանալով ոտքի կելնէ) Ե՛ս ալ քեզ չեմ ճանչնար... և ասկէ վերջը այս պաշտօնասենեակը չպիտի մտնես, կը վռնտեմ քեզ, հասկցա՞ր..., որովհետև դուն բաղդախնդիր, ստախօս, խաբեբայ, մատնիչ, գող և սրիկա՛յ մըն ես...։ (կը փորձէ Արփիարին վրայ նիստուիլ, Տամատեան կը միջամտէ և Արփիարը դուրս կը հանէ։ Ճանկիւլեան մինակ սենեակին մէջ վեր վար պտտելով բարձրաձայն կը շարունակէ)։ Եթէ Տամատեան չը միջամտէ՞ր, դաւաճանը չան սատա՛կ պիտի հանէի... չէ՛, չէ՛, հայ ազգը բնաւ արժանի չէր այս թշուա՜ռ վիճակին, Արփիարի նման ճիւաղներ, մատնիչներ. անգութներ և լրտես-յեղափոխականներ ազգը այս խեղճ վիճակին հասուցի՞ն..., ափսո՜ս հաղա՛ր ափսոս հայ ազգին, որ իր ծոցին մէջ ունի Արփիարնե՛ր....։

(Վարագոյրը կ'իջնէ)

ԻՆՆԵՐՈՌԴ ՏԵՑԱՐԱՆ

(Տեսարանը կը ներկայացնէ Հայոց Կաթուղիկոսական Վեհարանը, մէջ տեղը դրուած է երկայն սեղան մը կանաչ շուխայով ծածկուած, սեղանին վրայ կան զանգակ, կաղամար, զրիչ, թուղթ և Աւետարան մը։ Պատերէն կախուած են Ներսէս երկու կաթուղիկոսներու, Հայրիկի, Ներսէս Վարժապետեանի, Իզմիրլեանի, Նալպանտեանի, Աբովեանի, Պատկանեանի, Բաֆֆիի, Արծրունիի, Մերենցի, Ս. Նաղարեանցի, Ս, Շահազիզեանի և մի քանի նշանաւոր յեղափոխական գործիչներու և հերոսներու պատկերները։ Սրահին ճակատը կը զարդարէ Հայաստանի Զինանշանը, որուն երկու կողմերը դրուած են յեղափոխական կուսակցութեանց խորհրդանշանները։ Սեղանին շուրջը նստած են Նաղարբէկեան, Մ. Գալփագճեան Ց. Ճանկիւլեան, Թափառիկ, Մ. Կիւրճեան, Ց. Շ., Գ., Զ., Վ., Տօնապետեան և ուրիշներ։ Այս դատաստանական ժողովին կը նախագահէ Իզմիրլեան։)

Իզմիրլեան — Այսօրուան մեր ժողովին գործը պիտի լինի արդարութեամբ դատել Արփիար Անփիարեանին, որ չատերու կողմէն ամբաստանուած է իբր մատնիչ, դաւաճան և լրտես-յեղափոխական. Ազգը խնդրեց ինձմէ, որ այս ատեանը կազմեմ և նախագահեմ, ազգին կամքը չը մերժելով, այսօր հրաւիրեցի ձեզ այստեղ. Արփիարի մասին ի՛նչ որ գիտէք, լսած կամ տեսած էք պէտք է անկողմնակալութեամբ ճշմարտութիւնը յայտնէք և նախապէս պէտք է երդնուք։ (Իզմիրլեան ոտքի կելնէ, ներկայք ալ ոտքի կելնեն։ Իզմիրլեան Աւետարանը ձեռքը բռնելով կըսէ) Մենք, բոլոր ներկայ եղողներս, կերդնունք այս Սբ. Աւետարանին վրայ, որ ի՛նչ որ տեսած, լսած ենք ճշմարտութեամբ վկայենք, անձնական ատելութիւն, թշնամութիւն, նոյնպէս բարեկամութիւն, համակրութիւն և կուսակցական ոգին մէկ կողմ թողունք, նաեւ խղճի մըտօք և արդարութեամբ դատենք, դատապարտենք կամ արդարացնենք։ (Իզմիրլեան Աւետարանը համբուրելով կըսէ) Կ'երդնում։ (Ներկայք կարգաւ Ս. Աւետարանը կը համբուրեն և կերդնում խօսքը կը կրկնեն։ Այս բարդութիւնը վերջանալէ յետոյ Իզմիրլեան կը նստի, ներկայք եւս կը նստին։ Իզմիրլեան զանգակը կը հնչեցնէ, հայ գինուոր մը ներս մանելով կը խոնարհ[illegible] Իզմիրլեան կը հրամայէ) Արփիար Արփիարեանը ներս բե[illegible] ուրը կը մեկնի և քիչ յետոյ Արփիարը առաջը ձգած ներս կը մտնէ։ Իզմիրլեան Արփիարին կը հրամայէ) Նստեցէ՛ք։ (Արփիար պարապ աթոռին վրայ կը նստի նախագահին ճիշդ դիմացը, տրտում և տխուր դէմքով։ Նախագահը քարտուղարին) Կարդացէ՛ք տեղեկագիրը։

Քարտուղար — (ոտքի ելնելով) «Ինչպէս ձեզ յայտնի է տասնըհի՛նգ տարի առաջ ազգն ունէր յեղափոխական կազմակերպեալ կուսակցութիւններ, որոնք մինչեւ այսօր կը շարունակեն իրենց գոյութիւնն ու գործը, այն ժամանակ Հնչակեան կուսակցութեան մէջ կը գտնուէր Արփիար Արփիարեանը։ Ժամանակին զանազան գործիչներէ և անձերէ Արփիար ամբաստանուած էր իբր Թուրք կառավարութեան լրտես, անոր հլու հպատակ և Նազըմ փաշայի գործիք ի վնաս ազգին և յեղափոխութեան։ Եւ այժմ որ յեղափոխութեան և անձնուէր ու հերոս գործիչներու շնորհիւ Հայաստան իր անկախութիւնը ձեռք է բերած, այսօր, որ ա զ ա տ Հ ա յ ա ս տ ա ն ի մէջ խմբուած է ամբողջ հայ գաղթականութիւնը և հաստատուած է Ամենայն Հայոց կաթողիկոսութիւնը, և մենք՝ Իզմիրլեան Արքեպիսկոպոս, անհասանելի կամօքն Աստուծոյ, ընտրուած ենք կաթողիկոս Ամենայն Հայոց, մեր վրայ պարտք ծանրացած է քննել արդարութեամբ Արփիարի անցեալը, որովհետեւ շատեր իրաւամբ բողոքած են թէ՝ Արփիար ազգին կողմէ ամբաստանուած լինելով բնա՛ւ իրաւունք չունի ազատ ու անկախ Հայաստանի մէջ ապրելու և պաշտօնի հետամուտ լինելու, այս իրաւունքը վայելելու համար պէտք է նախապէս իր վրայ ծանրացած ամբաստանութիւնը ջրել ու հերքել, և կամ հակառակ պարագային, դատել ու դատապարտել մահուան։»

«Այս իրաւացի պահանջին ու բողոքին համաձայն, Հայկական Սենատը իրաւունք տուաւ մեզ այդ խնդիրը քննել մեր ներկայութեան. մենք ալ բոլոր յեղափ. կուսակցութիւններէ եր երկու ներկայացուցիչներ խնդրեցինք ինչպէս նաև խնդրին ծանօթ չէզոք անձեր հրաւիրեցինք, որ այժմ բոլորնիդ ալ ներկայ էք այս ժողովին։»

«Ուրեմն, այս ժողովը իրաւունք և լիազօրութիւն ունի վճռելու Արփիար Արփիարեանի մեղաւոր կամ անմեղ լինելը. այժմ մեր պարտքն է արդարութեամբ դատել ու վճռել, և մեր վճիռը պիտի հաղորդուի Հայկական իշխանութեան, որը միայն գործադրող բարձր մարմինն է։»

(Քարտուղարը կը նստի)։

Նախագահ — Այժմ կարգով ո՛վ որ ինչ գիտէ թո՛ղ խօսի առանց երկարաբանութեան, առանց խնդրէն հեռանալու։ Քարտուղա՛ր, արձանագրեցէ՛ք։

(Քարտուղարը գրիչը ձեռք կառնէ և կը սկսի արձանագրել ձեռքերը շարժելով։)

(Շարունակելի)

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

— Կ. Պոլսէն տեղս հասաւ Միտհատ փաշայի որդին Հայտար Պէյը և Մեծն-Բրիտանիա անուն նշանաւոր հիւրանոցն իջաւ։ Ինք ուսեալ և ազատամիտ 30 տարեկան հարուստ երիտասարդ մ'է, որ սուլթանին արհաւիրքներէն խոյս տալով արտասահման նետուած է։ Օսմ. դեսպանը երիտասարդ Թուրքին այցելութիւն տալով Պոլիս վերադարձնելու ջանքեր ըրաւ ապահովցնելով զայն, բայց նա՝ վստահութիւն չընծայելով մերժեց ու մի քանի օրէն կը մեկնի Փարիզ կամ Լոնտոն հաստատուելու համար։

— Պատերազմի ժամանակ Յունական բանակէ գրաւուած թնդանօթ մը Թուրքերու կողմէ Պոլիս փոխադրուած ատեն, Արեւելեան երկաթուղեաց պաշտօնեաներէն երկու յոյն հայրենասէրներ շոգեկառքէն առնելով տեղ մը կը պահեն զայն, յարմար ժամանակին դարձեալ Յունաստան վերադարձնելու համար։ Մատնիչներու թելադրութեամբ խնդիրը կը յայտնուի և երկու յոյները Ադրիանուպոլսոյ բանտը կը նետուին, ուր երկու և կէս տարի մնալէն յետոյ պ. Մաւրօզօրտաթոսի միջամտութեամբ սուլթանական հրովարտակով մը ազատ թողուած են, այժմ Աթէնք կը գտնուին։

Կեցցէ՛ հայրենասիրութիւն։

— Աթէնքի ներքին գործոց Նախարարութիւնը՝ գաւառային նահանգական վարչութեանց շրջաբերական յայտարարութեամբ մը կը ծանուցանէ թէ՝ այս տարի Ռումանիոյ մէջ վերջին ծայր աղքատութիւն տիրած ըլլալով յոյն հասարակութիւնը գործ փնտռելու համար Ռումանիա չդիմէ։

— Ալպանացի զինուորական մը Եըլտըզի մէջ վէ՛ հարուածեանով սպաննած է Ճէվատ Պէյը։ Այս առթիւ Եըլտըզի բարձրաստիճան պաշտօնեաներէն, շատեր ձերբակալուած են։

— Գաղղիացի հռչակաւոր ողբերգու պ. Մունէ Սուլլի մայրաքաղաքս հասաւ և ընդամենը չորս ներկայացում տուաւ, յորմէ 75 000 Դրախմ (50 000 ֆր.) ստանալով կը մեկնի այս օրերս։ Յունաստանի համար նորութիւն մըն էր 200 դրախմինոց տոմսակով թատրոն մտնել։

— Բ. Դուռը Աթէնքի դեսպանատան ծովային զինուորական կցորդ անուանեց Էնվէր Պէյը, որ մօտերս կը սպասուի տեղս։ Նորընտիր զինուորական կցորդն իր ուսումն աւարտած է Գերմանիոյ մէջ և կը խօսի անգլիերէն, գերմաներէն, գաղղիերէն և յունարէն լեզուները։ Էնվէր պէյը Թուրքիոյ ծովային զինուորականաց ամենէն զարգացեալը կը համարուի։

— Թուրք ոստիկան մը որ երիտասարդ Թուրքերու գործերը լրտեսելու համար Ժընէվ ղրկուած էր, տեղւոյն իշխանութենէն արտաքսուած է։

— Անգլիոյ և Թրանսվալի միջեւ թշնամութիւնները սկսան, թէեւ պատերազմը դեռ պաշտօնապէս չէ հրատարակուած։ Առաջին ընդհարումին անգլիական զօրքերը մեծ պարտութիւն կրեցին։ Թրանսվալի հանրապետութիւնը Միացեալ Նահանգներու Նախագահին միջամտութիւնը կ'ակնկալէ։ Փարիզէն կը հեռագրեն թէ՝ երբ անգլօ-թրանսվալական պատերազմը սկսի, Հապէշիստանի Մենելիք թագաւորը 40 000 զօրք շարժուն վիճակի մէջ դրած է Եգիպտական խնդրոյն շուտափոյթ վերջ տալու համար։ Անգլիոյ դէմ հապէշներու այս ատելութիւնը տեսնելով ռուսիա՝ յարմարագոյն առիթ կը համարի Եգիպտական խնդիրը յուզելու։ Ասոր կը վերագրուի Անգլիոյ պատերազմ հրատարակելու վարանումը։

— Լոնտոնէն Սեպտ. 26 Թուականաւ կը հեռագրեն թէ պարսկաստանի Թէհրան և Ռաշտ քաղաքներու մէջ խռովութիւններ ծագած են և բազմաթիւ քրիստոնեաներ ջարդուած են։ Այս դէպքերը — կըսէ հեռագիրը — պիտի արդարացնեն Ռուսիան եթէ յանկարծ Պարսկաստանի մէկ մասը գրաւել ուզէ։ Առ այս Ռուսիա Անգլիոյ հաճութիւնն առած է արդէն. խոստանալով որ Գաղղիոյ հետ չէզոք դիրք պիտի բռնէ Անգլօ—Թրանսվալական խընդրոյն մէջ։

— Վերջերս ժէօն Թուրքերը խստիւ կը հալածուին Կ. պոլսոյ մէջ։ Պալատական բարձր աստիճանաւորներ ձերբակալուելով Ասիոյ խորերը կաքսորուին և անոնցմէ շատերը ծովը կը նետուին գիշերանց,

— Սուլթանական հարէմին մէջ 18 կիներ ժէօն Թուրքերու համախո՜հ նկատուելով ծովը նետուեր են։ Այգ պարագային վոսփորի մէջ նաւարկող նաւավարներէն եղելութիւնը տարաձայնուեր և մեծ յուզում պատճառեր է պաշտօնական ակումբներու մէջ։

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

— Օրմանեան Պատրիարքը վերջնականապէս հրաժարական տուեր է, Սուլթանը լուր խրկեր է մի քանի օր ևս համբերել, բայց Պատրիարքը իր որոշման մէջ անփոփոխ մնալով պնդեր է հրաժարականին վրայ։

— Սուլթանը յանձնաժողով մը կազմած էր Հայոց Պատրիարքարանի պահանջները քննելու համար. յանձնաժողովը իր գործերը աւարտած և տեղեկագիր մը ներկայացուցած է սուլթանին, որը մի քանի օր առաջ իրատէով մը հետևեալ մարդասիրական շնորհներն ըրած է․․․

1. Ազատ երթևեկութիւն այն հայերուն, որո՛ք գաւառէ գաւառ կամ Պոլիս փոխադրուիլ կուզեն իրենց ապրուստը հայթայթելու համար։

2. Կոտորածի ժամանակ քանդուած Եկեղեցիները, վանքերը և դպրոցները կառավարութեան ծախքով վերաշինել։

3. Տէրութեան այն հայ պաշտօնեաները, որոնք պահանջ ունին կառավարութենէն և կոտորածի ժամանակ արտաքսուած են իրենց պաշտօնէն, բոլոր պարտքերը պիտի հատուցուին իրենց. դանձէն։

4. Եէտի Գուլէի մէջ հայկական Որբանոց մը բանալու շնորհը։

5. Ներում 54 հայ բանտարկեալներու. ատոնց մէջ երկու հայերու մահուան պատիժն ալ ցկեանս բերդարգելութեան փոխելն եղած է վերջին շնորհը։

Կըսուի թէ Սուլթանական այն իրատէի հրատարակութենէն անմիջապէս յետոյ Պատրիարքն իր հրաժարականը յետ առեր է։ Օտար թերթի մը թղթակիցը կըսէ — Սուլթանական այն իրատէի գոյութիւնը միայն թղթի վրայ է, իսկ գործադրութիւնը «Ալլահ քէրիմ տիր»ին վրայ է. Այս իրատէի հետ երբեք կապակցութիւն չունի Հայաստանի մէջ բարենորոգումներ մոցնելու հաշակաւոր այն ծրագիրը, զոր խոստացած է սուլթանն ի վաղուց, հետևապէս խեղճ հայերը — կըսէ թղթակիցը — դարձեալ չպիտի օգտուին։

Հետևեալ ծանրակշիռ լուրը կը հրատարակենք վերապահութեամբ։

— Պ. Մուրավիէֆի Ֆրանսական արտաքին գործերու նախարար պ. Տէլգասէի հետ տեսակցութիւնը, և միևնոյն առեն գաղղիական ու անգլիական նաւատորմիղներու Միջերկրական ծովը իջնելը կը հաւատացնեն մեզ որ մօտալուտ մեծ պատահարներու առջեւ կը գտնուինք։ Թէ՛ ինչ պիտի ըլլայ, նախագուշակել կարելի չէ. գէթ Եւրոպական մամուլը՝ խնդրոյն որոշ գոյն մը չէ տուած, սակայն հաւաստի աղբիւրներէ ելած տեղեկութեանց նայելով՝ Եւրոպական պետութիւնները որոշեր են Տարտանելի նեղուցը գրաւել և Թուրքին վրայ ճնշում բանեցնել, ազատ թողուլ նեղուցը եւրոպական ռէ պետութեան զրահաւորներու առջեւ, որոնց մուտքն արգիլուած էր Փարիզի 1858ի դաշնագրութեամբ։ Նախ Ռուսիա և Անգլիա այս խնդրոյն մէջ համաձայնելով որոշած են նեղուցին վրայ երկու զօրաւոր դիրքեր գրաւել, բայց Բ. Դրան մերժումն աւելի սուր կերպարանք մը տուած է խնդրոյն։ Երբ երկու հզօր տէրութեանց այս տրամադրութիւնն իրական գոյն ստանայ, անշուշտ օսմ. գերիշխանութեան հիմնական փճացումը կը նշանակէ, հետևապէս Թուրքը չպիտի վարուի այնպէս ինչպէս վարուեցաւ Կրետական խնդրոյ մէջ։ Ասկէ պէտք է հետևցնել որ Թուրքիոյ կառավարչական դրութիւնն ու Արևելեան ժողովրդի վիճակը մեծ փոփոխութիւններ պիտի կրեն։ Այս պարագային Պալքանեան փոքրիկ պետութեանց ապագան և Բիւզանդական քրիստոնեայ հասարակութեան ճակատագիրը կը մնայ բաղդին անորոշ խաւարին մէջ։

— Ս. Պետերպուրկի դահլիճը կը պնդէ իւր այն առաջարկին վրայ, զոր Բ. Դրան ղրկուցած էր երկու ամիս առաջ Ռուսօթուրք սահմանագլխին վրայ քիւրտերու աւազակութեանց վերջ տրուի. երկրորդ Կովկաս ապաստանող հայերու ի Թուրքիա վերադարձն արտօնուի։ Բ. Դուռը այս ճնշման տակ սկամայ համակերպելով Թէվֆիք փաշան մի քանի զինուորականներու հետ ղրկեց սահմանագլուխը, ուր կը սպասուի այս օրերս ռուս պատուիրակը զօրավար Զէլէնոֆ մի քանի հարիւրապետներու հետ, որոնք այդ պահանջներու գործադրութեան միջոցները դիւրացնելու համար պիտի բանակցին։

ԿՐԵՏԱԿԱՆ ԴՐԱՄԸ

Փրանսա գեղարուեստական տեսակէտով, ինչպէս նաև գրական և գիտական տեսակէտներով Եւրոպայի պետութեանց առաջինը լինելն անգամ մը ևս կը հաստատուի։ Ֆրանսական փողերանոցի (monnaie) քանդակագործ վարպետներն, վերջին ժամանակներս Ռուսական և Մենելիքեան դրամներն շինելէն յետոյ, պիտի շինեն նաև Կրետական դրամներն, որոց վրայ իշխան Գէօրգի կենդանագիրը պիտի լինի։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Փարիզ 5 Հոկտ. 99

ՀԱՄԱԼՍԱՐԱՆ գրական և գիտական ամսաթերթը, որ պիտի հրատարակուէր մեր խմբագրութեան տակ և մեր ծախքերով, այս ամսոյ սկիզբը, մեզմէ անկախ պատճառներով մէկ ամսոյ չափ ուշ լոյս պիտի տեսնէ։ Աւստրիոյ և Պուլկարիոյ միջեւ ճանապարհներու փճանալովը՝ երկաթուղիներու երթևեկութիւնը դժուարացած լինելով մեր թերթին տպագրական տառերը՝ մեր կարծած ժամանակէն գրեթէ մէկ ու կէս ամիս յետոյ մեզ պիտի ժամանեն։

Կը խնդրենք հրատարակել հաճիք այս երկտողը, հայ հասարակութեան և մեր արդէն բաժանորդ գրուիլ փութացողներու ․․․ կասկածանքի տեղի չտալու համար։

Մեր նոր հասցէն է՝

Rédaction „Hamalsaran" 3. Place Monge PARIS

Խմբագիրներ

Յովհ. Շաւարշ Մ. Պողոսսարեան

ԲԱՑՈՒՐՍԱՑ

ԲԱԶՄԱՎԷՊԻ

1900 ՏԱՐՒՈՅ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Տարեկան Գինն է Ֆր. 10 Ռուպլի 4 Տոլար 2

«Բազմավէպ» իւր յարգելի բաժանորդներէն այս տարուան մէջ շատ համակրանք տեսնելով, և զգալի կերպով առաւելլով բաժանորդաց թիւն, առաջիկայ տարւոյս իր պրակներն դեռ աւելի ճոխ պարունակութիւն մը պիտի ունենան։ Հասցէն՝

Rèdaction de la Revue "PAZMAVEP„

St. LaZar (Italie) VENISE

ԱՐՇԱԼՈՅՍ

Լրագիր Ազգային Գրական և Քաղաքական

Կը հրատարակուի ի Գահիրէ, Չորեքշաբթի և շաբաթ օրերը

Խմբագիր-Տնօրէն Տ. Ե. Թորոսեան

Տարեկան բաժնեգինն է 20 ֆր., վեցամսեայ 12ֆր.

Հասցէն՝ Ռետաքսիօն տիւ ժուրնալ արմէնիէն

ԱՐՇԱԼՈՅՍ Ապպասիէ Գահիրէ (Եգիպ.)

— Նոր Եօրքի Տիգրիս թերթը, տեղւոյն հրատարակչական ընկերութեան կողմէ սկսած է հրատարակուիլ «Ձայն Հայրենեաց» անունով, խմբագրութեամբ տիար Գ. Չիթճեանի։

— Լոյս տեսաւ տիար Յ. Կ. Պօնճուգեանի պատկերազարդ Բերական-Ընթերցարանը, որ բոլորովին նոր մեթոտով մինչեւ ցարդ հրատարակուածներու ամենէն ընտրելագոյնն է։ Գին 60 սանթիմ. վարժարանաց համար զեղչ կը լինի 15 0/0։ Դիմել հեղինակի հետևեալ հասցէին

Յ. Կ. Պօնճուգեան Վառնայ (Պուլկարի)

— Գրաշարնիս յանկարծ գործը ձգելով հեռացաւ, առանց նախապէս մեզ իմաց տալու, հետևապէս անցեալ ամիս չկրցինք թերթը հրատարակել։ Մեր յաջորդ թուով առաջիկայ Մայիսին Փարիզի մէջ Հայկական խառն ժողով մը գումարելու առաջարկը պիտի լինի, ուստի կը յանձնարարենք մեր բոլոր հայ եղբայրներու որ կուսակցական նեղ հաշիւները մէկդի թողլով աշխատին ժողովոյ գումարման միջոցները դիւրացնել և միանգամ ընդ միշտ վերջ տալ այս «բսի բսաւ» ողբերգութեան։ Առ այս ուր որ անկ էր դիմած և Տիար Մ. Զիրակի Հաճոյութիւնն ալ առած ենք։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՄԻՈՒԹԻՒՆ»Ի